ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԲԸԱԾՁԲ-17/38-5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» 12 2017 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը (այսուհետև՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մոտադյանի, մի կողմից, և «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ռ. Մայիլյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր») կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի հուլիսի 19-ին կնքված պետության կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների պետական գնման N **«ՀՀՄՆ-ԲԸԱԾՁԲ-17/38-5»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ. դեկտեմբերի 14-ի «Թույլտվություն տալու մասին» N 1596-Ա որոշմամբ՝ Պատվիրատուն և Կապալառուն համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 5.1-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1.1 ենթակետով.

«5.1.1 Պայմանագրի գնից՝ **2 169 765** (երկու միլիոն մեկ հարյուր վաթսունինը հազար յոթ հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է՝ հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:»:

1.1.2 Պայմանագրի 1.3 կետում **«14 դեկտեմբեր 2017թ.»** բառերը փոխարինել **«30 հունիս 2018 թ.»** բառերով:

1.1.3 Պայմանագրի N 2 հավելվածում **«14.12.2017թ.»** բառերը փոխարինել **«30.06. 2018թ.»** բառերով:

1.1.4 Պայմանագրի N 3 «Վճարման ժամանակացույց» հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
[illegible]011012953
ՀՀ ֆ[illegible] նախարարության աշխատակազմի
[illegible]ությունում

Աշխ[illegible]

[illegible] ուրադյան
([illegible])

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության 1նրբ. տ 8/Ա,
հեռ.՝ 093743040,
էլ. փոստ՝ artmashin@mail.ru
ՀՎՀՀ 02576479
հ/հ 2470100564110000
Արդշինբանկ ՓԲԸ

Տնօրեն՝

Ռ. Մաշիյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված

« » 2017թ. կնքված

N 2 համաձայնագրի

Հավելված 3

«19» հուլիսի, 2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-5» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազար ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017- 2018 թվականներին՝ ըստ ամիսների՝ այդ թվում													
		2017թ.						**2018թ.**							
		հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	**Ընդամենը**
1	ՀՀ Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի Մեծամորի սրբարանների (թանգարանի շենք) ամրակայման, նորոգման և վերականգնման 2017թ. կատարվելիք աշխատանքներ	1993.86	1993.86	1993.86	5956.50	5956.50	5956.50	5956.50	5956.50	5956.50	5956.50	5956.50	6270.00	6270.00	**6270.00**

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
հ/հ 900011012953
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
[illegible] վարչությունում

Աշխատա[illegible] [illegible]յան

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության 1նրբ. տ 8/Ա,
հեռ.՝ 093743040,
էլ. փոստ՝ artmashin@mail.ru
ՀՎՀՀ 02576479
հ/հ 2470100564110000
Արդշինբանկ ՓԲԸ

Տնօրեն՝ Ռ. Մայիլյան

Կ.Տ

Արդշինբանկ

№ 652-13250

«27» 12 2017թ.

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ ՀԲԵՆ17/117-01

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ Մշակույթի նախարարության և «Արթմաշին» ՍՊԸ (ՀՎՀՀ՝ 02576479) (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 19.07.2017թ. կնքված պետության կարիքների համար կապիտալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ ՀՀՄՆ-ԲՀԱՇՁԲ-17/38-5 պայմանագրում լրացում և փոփոխություններ կատարելու մասին թիվ 2 համաձայնագրից (այսուհետ՝ Երաշխիքի տրամադրման հիմք հանդիսացող պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

Սույն երաշխիքով Բենեֆիցիար է հանդիսանում ՀՀ Ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Բենեֆիցիար):

2. Երաշխիքով «Արդշինբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 2 169.765 (երկու միլիոն մեկ հարյուր վաթսունինը հազար յոթ հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի Պահանջում նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Սույն Երաշխիքն ուժի մեջ է մտնում Երաշխիքի տրամադրման հիմք հանդիսացող պայմանագրով նախատեսված կանխավճարի գումարն ամբողջությամբ՝ 2,169,765 (երկու միլիոն մեկ հարյուր վաթսունինը հազար յոթ հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ գումարի չափով՝ Պրինցիպալի՝ Երաշխիք տվող անձի մոտ սպասարկվող թիվ 2470100564110000 հաշվարկային հաշվին մուտք լինելու պահից և գործում է մինչև 01.08.2018թ. ներառյալ:

6. Երաշխիքի տրամադրման հիմք հանդիսացող պայմանագրի շրջանակներում յուրաքանչյուր կատարողական ակտ ներկայացնելու դեպքում ներկայացված կատարողական ակտի գումարի չափով Երաշխիք տվող անձը նվազեցնում է Երաշխիքի գումարը:

7. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) Բենեֆիցիարի գրավոր պահանջը,

բ) Պրինցիպալի կողմից թիվ ՀՀՄՆ-ԲՀԱՇՁԲ-17/38-5 պայմանագրում լրացում և փոփոխություններ կատարելու մասին թիվ 2 համաձայնագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմնավորումը:

8. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ, 0015, ք. Երևան,
Գրիգոր Լուսավորչի փող., 13
Հեռ. (+37412) 222222
Ֆաքս. (+37412) 567486
e-mail: office@ardshinbank.am
URL: www.ardshinbank.am

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Բենեֆիցիարն իրավունք ունի Երաշխիք տվող անձի բանկից պահանջելու Երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներկայացնելով Երաշխիքի իր օրինակը:

10. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 9-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Ընդ որում, Երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում Երաշխիքի գումարով:

11. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե

ա) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում Երաշխիքի պայմաններին,

բ) պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

12. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է Բենեֆիցիարին:

13. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

14. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործառնական տնօրենի տեղակալ՝
ծարկերի կենտրոնացված ձևակերպումների
և ուղղորդման վարչության պետ՝ Իրինա Աբրամյան

Գլխավոր հաշվապահ՝ Լուսինե Ներսիսյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ***ՀՀՄՆ-ԲԸԱԾՁԲ-17/38*** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2017 թվականի հուլիսի 19-ին** կնքված N ***«ՀՀՄՆ-ԲԸԱԾՁԲ-17/38-5»*** ծածկագրով պայմանագրում **2017 թվականի դեկտեմբերի 27-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: ՀՀ կառավարության 2017 թ. դեկտեմբերի 14-ի «Թույլտվություն տալու մասին» N 1596-Ա որոշմամբ թույլատրվել է պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգել մինչև 2018 թվականի հունիսի 30-ը:

Փոփոխության նկարագրություն N 1: Պայմանագրի 1.3 կետում և N 2 «Օրացուցային գրաֆիկ» հավելվածում աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2018 թ-ի հունիսի 30-ը:

Փոփոխության հիմնավորում N 1: ՀՀ կառավարության 2017 թ. դեկտեմբերի 14-ի «Թույլտվություն տալու մասին» N 1596-Ա որոշում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետ:

Փոփոխության առաջացման պատճառ N 2: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգմամբ պայմանավորված՝ Պայմանագրով նախատեսված և 2018թ. կատարվելիք աշխատանքների գումարների 95 տոկոսի չափով կանխավճարի տրամադրում:

Փոփոխության նկարագրություն N 2: Պայմանագրով նախատեսված և 2018թ. կատարվելիք աշխատանքների գումարների 95 տոկոսի չափով կանխավճարի տրամադրում:

Փոփոխության հիմնավորում N 2: ՀՀ կառավարության 2017 թ. դեկտեմբերի 14-ի «Թույլտվություն տալու մասին» N 1596-Ա որոշում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն